



Էներգետիկա



Մարուխյան, Ոստանիկ Ջավենի.

Էներգետիկական մենեջմենթ : դասագիրք / Ո. Ջ. Մարուխյան, Լ. Ս. Հովհաննիսյան. - Երևան: Ճարտարագետ, 2013. - 360 էջ. - ISBN 978-9939-55-967-4 :


Аннотация: [Էներգախնայողության արդյունավետության բարձրացման գործընթացում մեծ նշանակություն ունի ոչ միայն նոր սարքավորումների, առաջատար տեխնոլոգիաների ներդրումը, այլև դրանց կատարելագործումն ու արդիականացումը, տեղական և երկրորդական էներգառեսուրսների լայն օգտագործումը, ինչպես նաև էներգասպառման հստակ կազմակերպված կառավարումը, այսինքն՝ էներգետիկական մենեջմենթը և էներգետիկական աուդիտը: Էներգետիկական մենեջմենթը ներկայացնում է տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների համախումբ՝ ուղղված էներգառեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և հանդիսանում է ձեռնարկության կառավարման ընդհանուր կառուցվածքի բաղկացուցիչը: Դա գաղափարների, գիտելիքների, քաղաքական գերակայությունների, գործնական ռազմավարության և պլանավորման, կարգավորման և մարդկանց գործունեության բոլոր տարատեսակների իրականացման բարդ կառուցվածք է՝ վերջնականապես ունենալով էկոլոգո-տնտեսական կայուն զարգացումը: Այն ենթադրում է նաև էներգասպառման համալիր վերլուծության անցկացում և վերջինիս հիման վրա ձեռնարկություններում և կազմակերպություններում էներգոխնայողական միջոցառումների իրականացում: Վերոհիշյալ հարցերի շրջանակը դասագրքում ներկայացված է մանրամասն և անհրաժեշտ ծավալով: Դասագիրքը համապատասխանում է ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) «Էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ և էներգետիկական մենեջմենթ» մասնագիտությամբ դասավանդվող «Էներգետիկական մենեջմենթ» դասընթացի ուսումնական ծրագրին, նախատեսված է նույնանուն մասնագիտության ուսանողների համար: Կարող է օգտակար լինել նաև ոլորտի լայն շրջանակների մասնագետներին, ովքեր զբաղվում են էներգառեսուրսների ծախսի պլանավորման, իրացման կազմակերպման ու հաշվառման խնդիրներով]:



Սահակյան, Ա. Պ.

ՋՋԷՌ-440 ռեակտորներով էներգաբլոկի սարքավորումները և շահագործման ռեժիմները: դասագիրք / Ա. Պ. Սահակյան, Ռ. Զ. Սարուխյան, Վ. Գ. Պետրոսյան ; Խմբագիր՝ Հ. Յ. Պետրոսյան; Գրախոսներ՝ Ս.Մինասյան, Ա.Մկրտչյան, Ա.Գևորգյան. - Երևան : Էդիթ Պրինտ, 2017. - 282+40 (հավելված) էջ : աղյուսակ, լուսանկար. - ISBN 978-9939-0-2076-1


Аннотация: [Դասագրքում նկարագրված է ՋՋԷՌ-440 էներգաբլոկի հիմնական սարքավորումները և աշխատանքային ռեժիմները: Մանրամասն ներկայացված են էներգաբլոկի կառավարման սկզբունքները, նրանում ընթացող տեխնոլոգիական պրոցեսները: Դիտարկված են էներգաբլոկի շահագործման ռեժիմները, որոնք վերլուծվել են Հայկական ատոմային էլեկտրակայանի անվտանգ շահագործման ապահովման տեսանկյունից: Դասագիրքը նախատեսված է «Ատոմային էլեկտրական կայաններ և տեղակայանքներ», «Տեխնոլոգիական պրոցեսների կառավարում (ատոմային էներգետիկայի բնագավառում)» և «Միջուկային ռեակտորների ֆիզիկա» մասնագիտություններով սովորող ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև ատոմային էլեկտրակայաններ շահագործող, միջուկային անվտանգությունը կարգավորող և գիտահետազոտական կազմակերպությունների մասնագետների համար]:



Հովսեփյանակի, Համբարձում Արմենակի.

Ջերմային էլեկտրակայանների կաթսայական ագրեգատների փորձարկումը և կարգաբերումը : ուսումնական ձեռնարկ = Испытание и наладка котельных агрегатов тепловых электростанций : учебное пособие / Հ. Ա. Հովսեփյանակի ; ՀՀ Կրթ. և գիտ. նախ., ՀՊՃՀ. - Երևան : Ճարտարագետ, 2010. - 228 էջ : նկ., աղս. - ISBN 978-9939-55-495-2


Аннотация: [Գրքում լուսաբանված են էներգետիկական կաթսայում ագրեգատների փորձարկման և կարգաբերման նպատակը, հիմնական դրոյթները և խնդիրները: Դիտարկված են տարբեր վառելիքների, դրանց այրման արգասիքների նմուշառման և վերլուծության մեթոդները: Բերված են հանձնարարականներ՝ փորձարկումների հիման վրա ջերմային հաշվեկշիռների կազմման, փորձարկման արդյունքների վերլուծության և սխալանքի գնահատման վերաբերյալ: Շարադրված են կաթսայական ագրեգատի հնոցների և հնոցային սարքերի աերողինամիկական բնութագրերի, հնոցային ռեժիմի և այրման պրոցեսի հետազոտման, տաքացման առանձին մակերևույթների, փչող-քարշող տեղակայանքների փորձարկումների և կարգաբերման հարցերը: Դիտարկված են շոգեկաթսաների բնական շրջանառության կոնտուրների փորձարկումների ու կարգաբերման առանձնահատկությունները և շրջանառության հուսալիության վրա ազդող գործոնները: Գիրքը նախատեսված է ջերմաէներգետիկական մասնագիտությունների ուսանողների համար և կարող է օգտակար լինել ջերմային էլեկտրակայանների ինժեներատեխնիկական անձնակազմին]:



Գևորգյան, Ա. Ա.

Ատոմային էլեկտրական կայաններ: դասագիրք / Ա. Ա. Գևորգյան, Ռ. Զ. Մարուխյան. - Երևան : Լուսարաց, 2012. - 250 էջ. - ISBN 978-9939-69-026-1

Аннотация: [Դասագրքում ներկայացված են ատոմային էներգետիկայի դերը համաշխարհային էներգետիկայում, ատոմային էներգետիկայի առանձնահատկություններն ու առավելությունները էլեկտրական էներգիայի արտադրության մյուս աղբյուրների համեմատ]:




Ղազարյան, Լադիկ Մնացականի.

Ջերմային էլեկտրակայանների տուրբինային տեղակայանքների շահագործում : դասագիրք / Լ. Մ. Ղազարյան ; Մասնագիտ. խմբ.՝ Ռ. Զ. Մարուխյան; ՀՀ կրթ. և գիտ. նախ., ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ). - Երևան : Ճարտարագետ, 2007. - 192 էջ : նկ. - Օգտ. գրակ.՝ 13 անուն. - ISBN 978-99941-66-43-5

Նվիրվում է ՀՊՃՀ (Պոլիտեխնիկի)-ի 75-ամյակին

Аннотация: [Դասագրքում դիտարկված են ջերմային էլեկտրակայանների տուրբինային տեղակայանքների շահագործման վերաբերյալ հարցերը: Նկատի ունենալով ՀՀ-ում գործող ատոմային և կառուցվող շոգեգազատուրբինային էլեկտրակայանները, հատուկ ուշադրություն է դարձված այդ կայանների տուրբատեղակայանքների շահագործման հարցերին: Նախատեսված է Ջերմաէներգետիկա մասնագիտության բակալավրական և մագիստրական ուսուցման աստիճանների ուսանողության համար և կարող է օգտակար լինել նաև ջերմային էլեկտրակայաններ շահագործող անձնակազմի համար]:




Մարուխյան, Ռստանիկ Զավենի.


Ջրախնայողական տեխնոլոգիաների կիրառումը էներգետիկայում : դասագիրք = Применение водосберегающих технологий в энергетике : учебник / Ռ. Զ. Մարուխյան, Լ. Ս. Հովհաննիսյան ; ՀՀ կրթ. և գիտ. նախ., ՀՊՃՀ. - Երևան : Ճարտարագետ, 2007. - 288 էջ : նկ. - Մատենագիտ. էջ՝ 280. - ISBN 978-99941-61-80-0 : Նվիրվում է ՀՊՃՀ (Պոլիտեխնիկի)-ի փառապանծ 75-ամյակին

Аннотация: [Գրքում շարադրված են ջերմային և ատոմային էլեկտրակայաններում և արդյունաբերական ձեռնարկություններում ջրի արդյունավետ օգտագործմամբ արտադրական ջրամատակարարման համակարգերի նախագծման և շահագործման ժամանակակից մեթոդները: Դիտարկված են նաև շրջապատուտային և անջրթող ջրամատակարարման համակարգերի ստեղծման և շահագործման հարցեր և դրանց շահագործողական հուսալիությունն ապահովող միջոցառումները:Գիրքը գրված է «Ջրախնայողական՝ տեխնոլոգիաների օգտագործումը էներգետիկայում» առարկայի ուսումնական ծրագրերին համապատասխան և նախատեսված է որպես դասագիրք «Շրջակա միջավայրի

ճարտարագիտական պաշտպանություն» մասնագիտության և հարակից մասնագիտությունների ուսանողների համար, կարող է օգտակար լինել ջերմային և ատոմային էլեկտրակայանների և արդյունաբերական ձեռնարկությունների ինժեներատեխնիկական անձնակազմին, ովքեր աշխատում են արտադրական ջրամատակարարման համակարգերի նախագծման և շահագործման ոլորտում]:



Վերականգնվող և մաքուր էներգիայի հինգերորդ միջազգային համաժողով "Ցածր ածխածնային զարգացման հեռանկարներ Հայաստանում" (Երևան, հոկտեմբերի 24-25): համաժողովի նյութեր = The 5 International Renewable and Glean Energy Conference "The Prospects of Low Carbon development in Armenia" : Conference Proceedings = 5-ая Международная конференция по возобновляемым и чистым источникам энергии "Перспективы низкоуглеродного развития Армении" : Материалы конференции / Ընդ. խմբ. Ս. Շատվորյան. - Երևան : Լեզալ Պրես, 2014. - 240 էջ : նկ. - Տեքստը՝ հայ. ռուս. և անգլ. լեզ. - Հեղ. ցուցիչ՝ էջ 238. - ISBN 978-9939-815-42-8



Պապիկյան, Ստեփան Ռաֆիկի.

Արցախի էներգետիկայի պատմություն / Ս. Ռ. Պապիկյան. - Երևան : Ա. հ., 2016. - 22 էջ . - Գրականության ցանկ՝ էջ 21.

Аннотация: [Գրքույկում ներկայացվում է Արցախի էներգետիկայի համառոտ պատմությունը և նրա զարգացման հեռանկարները]: